

Տիգրան Ամիրժանեան. «ՈՒՍԵԱՆ ՊԱՆԴՈՂՈՏ» (Վանեցոյ կեանքից). ամիս-
փեց Խ. Տէր-Յովհաննիսեանց. 40 էր. գինն է 15 կ. Թիֆլիս 1903 թ.

Տիգրան Ամիրժանեանի «Ուսեալ պանդուխտը» ողբերգու-
թիւնն է: Ողբերգութեան նիւթը պանդուխտի վիճակն ու զգաց-
մունքներն են:

Պ. Տէր-Յովհաննիսեանը աւելորդ է համարել ամբողջա-
պէս տպել կամ արտատպել այդ ողբերգութիւնը (ինձ յայտնի
չէ—տպուած է եղել արգիօք այդ ողբերգութիւնը երբեիցէ, թէ
ոչ), այլ «ամիսփեղ է», այսինքն բերել է միմիայն մի քանի հա-
տուածներ, իսկ մնացած մասերը պատմել է իր խօսքերով, ար-
ձակ ոճով:

Որքան կարելի է դատել մէջ բերուած հատուածներից,
պ. Տէր-Յովհաննիսեանը զուր է «ամիսփեղ» հեղինակի գրածը:
Ընթերցողին ցոյց տալու համար, թէ որքան զգացմունք
է պարունակում և որքան ճաշակով է գրուած պ. Ամիրժանեա-
նի ոտանաւորը, մենք առաջ կը բերենք միայն մի երկտող, որ
արժէ պ. Գրիգոր Բալասանի ամբողջ առձեռն, գրպանի և լիա-
կատար «Զգացմունքներին»:

«Թո՛ղ, անպէ՛ք, թող՝ որ իմ սիրտ կրակ ու բոց վա-
ռուած էլնի՛,

Թող իմ աչք՝ կլկլացող պղտոր-պղտոր աղպիւր էլնի»:

Տ. Յ.

Յարութիւն Եսայեան. «ԳՐԲԱՅԻ ՄՏՐՈՂՈՒՆԵՐ» (պատկեր) 15 էր., գինն է 5
կոպ., Թիֆլիս, 1903 թ.

Պ. Եսայեանի «պատկերի» նիւթը հետաքրքրական է:

Ամենքին յայտնի է, թէ ինչ դեր են խաղում գրագետները
մեր հասարակութեան անապաշտ խաւերում:

Պ. Եսայեան գիտել է երևոյթը, նկատել է մի քանի հե-
տաքրքրական գծեր և, ուզելով հարուածել չարիքը գեղարուես-
տական գրուածքի ձևով, չարագրել է իր «պատկերը»:

Սակայն գեղարուեստօրէն գրելու շնորհքը ամենքին չէ
տուած:

Այն, ինչ որ իր աչքով տեսել է, պ. Եսայեանը մեղ պատ-
մում է գրագէտ ոճով, և մեղ համար այդ հետաքրքրական է:
Իսկ այն, ինչ որ պ. Եսայեանն աւելացրել է իր տեսածի վրայ
կամ փոփոխել է իր տեսածում իր երեակայութեան միջոցով,
ուրիշ խօսքով այն, ինչ որ պէտք է գեղարուեստական երկ
դարձնէր պ. Եսայեանի գրուածքը, դուրս է եկել վերին աստի-

ճանի միամիտ, և զրա հնորհիւ ամբողջ «պատկերը» աշակերտական գրուածքի տպաւորութիւն է գործում:

Որ յուսահատ ընդէնում մի բժիշկ, որ համալսարանից միամիտ արհեստի հնարներ է սովորել և զարգացմամբ ամենևին չէ տարբերում սովորական «դալլաքներից», կարող է դիմել դրբացի օգնութեան,—այդ, դիցուք, հնարաւոր է: Բայց որ դրբացը կարողանայ բժշկից փող կորզել, հաւատացնելով նրան, թէ պէտք է Չինաստանից դեղ բերել տայ, այնպէս որ ամենաքիչը մի ամիս կը քաշի, բայց եթէ նա (բժիշկը) մի քիչ աւելի փող տայ, կը շտապեցնէ, և դեղը Չինաստանից Թիֆլիս մի շաբաթում բերել կը տայ,—դրան հաւատալու համար պէտք է աւելի միամիտ լինել, քան էմ. քահ. Նաղարեանցի գրքի ընթերցողները:

S. Յ.

Ruchard Hermann: «Anatolische Landwirtschaft» Leipzig. 144 s. 1900
Իխսարդ հերման. «Անատոլիայի գիւղատնտեսութիւնը». 144 էր.

Հեղինակը վեց տարի շարունակ վերատեսչի պաշտօն է վարել թիւրքական «գիւղատնտեսութեան, հանքերի և անտառների նախարարութեան» մէջ, մի շարք ճանապարհորդութիւնների է կատարել երկրի խորքում և ապա կազմել է իր աշխատութիւնը, որի նպատակն է պատկերացնել Անատոլիայի գիւղատնտեսութեան ներկայ վիճակը:

Անատոլիան հին ժամանակներում յայտնի էր իբրև բարեբեր մի երկիր, իբրև «գիւղատնտեսական մի մեծ շտեմարան»: Իսկ այժմ այնտեղ հողատիրական պայմաններն այնքան անտանելի են, հարկերն այնքան ծանր, վարչական ճնշումն այնքան սանձարձակ և կուլտուրան այնքան յետամնաց, որ գիւղատնտեսութիւնը երբեք զարդանալ չէ կարող, թէև նա տեղական ազգաբնակչութեան զլխաւոր պարագմունքն է կազմում:

Այդպիսով հետզհետէ աղքատանում է ժողովուրդը և աւելի ու աւելի վատ վիճակի մէջ ընկնում:

Համառօտակի նկարագրում է Անատոլիայի տեղագրութիւնը, կլիման, բուսականութիւնը, կենդանիները, ազգաբնակչութիւնը (թիւրքեր, հայեր, յոյներ, չերքեզներ, քիւրդեր, լազեր և այլն),—երկրագործութեան պէս-պէս ձևերը, բանջարանոցային բույսերը, պտղատու ծառերը, հացահատիկները, ընտանի կենդանիները և այլն: Միայն թուուցիկ կերպով մի քանի խօսք է ասում երկրագործութեան հետ կապուած հարկերի մասին և վերջը հրաւեր է կարգում գերմանացիներին գաղթել Անա-